29.03.2012թ. N 20/10-162-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ
Ս. Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն Ի Ն

Հ ա ղ ո ր դ ո ւ մ՝

Հայաստանի Հանրապետության դատախազության՝ 2011 թվականի գործունեության մասին

Մեծարգո նախագահ,

Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ներպետական և միջազգային համապատասխան իրավական ակտերով, 2011թ. ընթացքում որոշակի աշխատանքներ է կատարել հանցավորության կանխարգելման ու վերլուծության, հանցագործությունների բացահայտման և վերացման, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, դիմումների քննարկման, մարդու, սեփականության, տնտեսական գործունեության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ ուղղված, ընդհանուր բնույթի, կոռուպցիոն և կազմակերպված, զինվորական հանցագործությունների բացահայտման, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության, դրա որակի ու արդյունավետության բարելավման, դատարանում մեղադրանքի պաշտպանության, պետական շահերի պաշտպանության, պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, կազմակերպական-վերահսկողական, միջազգային համագործակցության, ինչպես նաև դատախազական գործունեության մյուս ոլորտներում: Գործունեության առավել կարևորություն ներկայացնող հարցերով կատարվել են ուսումնասիրություններ ու վերլուծություններ և դրանց արդյունքները քննարկվել են դատախազության կոլեգիայի նիստերում ու համապատասխան խորհրդակցություններում, որոնց արդյունքներով կազմված համապատասխան ակտերում ամրագրված կանխորոշումները կարևոր նշանակություն են ունեցել քրեական պետական քաղաքականության մշակման և իրականացման համար:

2011թ. գրանցվել է հանցագործության 16572 (2010թ.՝ 15477) դեպք, այսինքն՝ դեպքերն ավելացել են 1095-ով, աճը կազմել է 7,1%: Արձանագրված դեպքերից բացահայտվել է 14287-ը, 2285-ը չի բացահայտվել (2010 թ.-ին 15477 դեպքից չի բացահայտվել 2227-ը): 2011թ.-ին բացահայտումը կազմել է 86.2% (2010թ.՝ 84,6%):

2011թ. 67 դեպքով կամ 2%-ով աճել են <u>մարդու դեմ ուղղված հանցագործությունները</u> (3432-3499)՝ կազմելով արձանագրված հանցագործության դեպքերի 21 %-ը: Ընդ որում, աճել են սպանության (41-60), սպանության փորձի (27-29), դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու (1353-1359), այդ թվում առողջությանը ծանր վնաս պատճառելու (167-170), թրաֆիքինգի (13-16) դեպքերը: Նվազել են սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների (82-71) դեպքերը:

Սպանության դեպքերից 17 քրեական գործով հանցագործությունները փաստացի դեռևս չեն բացահայտվել, բացահայտումը կազմել է 71,6% (2010թ.՝ 73,1%): Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի բացահայտման աշխատանքներում տեղաշարժ չի

արձանագրվել՝ բացահայտումը դարձյալ կազմել է 83%: Սպանության փորձերի բացահայտումը կազմել է 82,7% (2010թ.՝ 88,8%):

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների կտրվածքով երկրի հանցավորության վիճակի հանգամանալից վերլուծությունը ցույց է տվել, որ հանցատեսակների մեծ մասի դեպքերի աճը որոշակիորեն պայմանավորված է ՀՀ ոստիկանության մարմինների կողմից հանցագործությունների հաշվառման, գրանցման գործընթացի բարելավմամբ, այդ հանցագործությունների լատենտայնության նվազմամբ: Վերջին պատճառը հատկապես բնութագրական է թրաֆիքինգի դեպքերի աճին, քանի որ նշված հանցատեսակը աչքի է ընկնում առավել բարձր լատենտայնությամբ: Թրաֆիքինգը դասվում է ոչ ակներևության պայմաններում կատարվող այն հանցագործությունների շարքը, որի հատկապես սկզբնական փուլերը (հավաքագրման, փոխադրման և այլն) աչքի են ընկնում հանցավորի իրական նպատակների քողարկմամբ, մոլորության մեջ գտնվող տուժողների կողմից հոժարակամ և գիտակցված վարքագծի դրսևորմամբ, իսկ այդ գործողությունների հանցավոր բնույթը մեծամասամբ ի հայտ է գալիս հանրորեն վտանգավոր հետևանքները վրա հասնելուց հետո: Արարքի ակնհայտ հանցավոր դրսևորումները, այդ թվում՝ բռնությունները, սպառնալիքները, խաբեությունները և հարկադրանքի մյուս տեսակները, ինչպես նաև քողարկված նպատակները, հիմնականում ի հայտ են գալիս անձին արտերկիր փոխադրելուց հետ՝ կոնկրետ գործընթացների մեջ ներգրավելու ընթացքում: Եթե սրան էլ ավելացնենք այն հանգամանքը, որ շատ դեպքերում ոչ միայն հանցագործները, այլ նաև տուժողներն ու վկաները, տարբեր դրդապատճառներից ելնելով, բացարձակապես շահագրգռված չեն հանցագործությունը բացահայտելու հարցում, ապա պարզ կդառնա թրաֆիքինգի դեպքերի քողարկվածության աստիճանը, որն էլ, իր հերթին, զգալի դժվարություններ է ստեղծում դրա դեմ պայքարի աշխատանքները կազմակերպելիս:

2011թ. արձանագրվել է դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու 170 (2010թ.՝ 167) դեպք, աճը կազմել է 1,8 %:

2011թ. դատախազական հսկողություն է իրականացվել մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստված 10113 նյութի նկատմամբ, որը 368-ով կամ 3,7%-ով ավելի է նախորդ տարվանից:

2011թ. նախապատրաստված 10113 նյութից 975-ով կամ 9,6 %-ով հարուցվել են քրեական գործեր:

2011թ. մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հարուցված և վարույթը ավարտված 863 (2010թ.՝ 830) քրեական գործի նկատմամբ իրականացվել է դատախազական հսկողություն, որոնցից 434-ը կամ 50,2%-ը՝ 529 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 404-ի (2010թ.՝ 376) կամ 46,8 %-ի (2010թ.՝ 45,3%) վարույթը կարճվել է, 212 (2010թ.՝ 184) քրեական գործի վարույթ կասեցվել է:

2011թ. մեղադրական եզրակացությամբ դատարաններ է ուղարկվել 434 (2010թ.՝ 435) քրեական գործ 529 (2010թ.՝ 547) անձի վերաբերյալ: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ նույն բնույթի 28 (2010թ.՝ 19) քրեական գործ է ուղարկվել դատարան: Դատարան ուղարկված քրեական գործերը կազմել են ավարտված քրեական գործերի 50,3%-ը (2010թ.՝ 52,4%):

2011թ. քննությունն ավարտված 423 (2010թ.՝ 472) քրեական գործով 513 (2010թ.՝ 579) անձի վերաբերյալ մեղադրանք է պաշտպանվել: Հաշվետու ժամանակահատվածում դատաքննությունն ավարտված 423 գործով դատի տրված 513 անձից դատապարտվել է 386-ը՝ 320 գործով, 4 գործով 4 անձ արդարացվել է, 25 գործով 25 անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են կիրառվել, իսկ 98 անձի վերաբերյալ 74 գործի վարույթ դատարանի կողմից կարճվել է:

2011թ. դատապարտված 386 անձից 241-ը կամ 62,4 %-ը դատապարտվել է ազատազրկման, որոնցից 6-ը (2010թ.՝ 9) դատապարտվել է ցմահ ազատազրկման, 79-ը կամ 20,4 %-ը՝ տուգանքի, 61-ի կամ 15,8 %-ի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածով սահմանված կարգով պատիժը պայմանական չի կիրառվել, 6-ի կամ 0,4 %-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը:

2011թ. ընթացքում դատարանում ավարտված 122 (2010թ.՝ 160) քրեական գործով 142 (2010թ.՝ 196) անձի վերաբերյալ կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

2011թ. ընթացքում 182 անչափահասի կողմից կատարվել են մարդու դեմ ուղղված հանցագործություններ (2010թ.՝ 178), դատապարտվել է 11 անչափահաս, որոնք կազմում են դատապարտված անձանց 2,8%-ը (2010թ.՝ 28 անչափահաս, 5,8%-ը):

2011թ. արձանագրվել է **սեփականության դեմ ուղղված հանցագործությունների** զգալի՝ 410 դեպքով կամ 7,6%-ով աճ (5802-5392): Դեպքերի աճին զուգահեռ, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման գործընթացում արձանագրվել է դրական փոփոխություն՝ բացահայտման ցուցանիշը բարելավվել է 3,2%-ով՝ կազմելով 74,2% (2010՝ 71%):

2011թ. գրանցված 15648 հանցագործության դեպքի զանգվածում անձնական գույքի հափշտակությունների 5114 դեպքի տեսակարար կշիռը 32,7% է, իսկ սեփականության դեմ ուղղված հանցագործություններինը՝ 88,1%-ը:

Սակայն, ինչպես սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, այնպես էլ անձնական գույքի հափշտակությունների մասով, հանցավորության շարժընթացում տեղի է ունեցել 487 դեպքով կամ 10,5%-ով (5114-4627) աճ՝ 72,7% (2010՝ 69,3%) բացահայտման ցուցանիշով, բացառությամբ բնակարանային գողության 901 (2010՝ 1156) դեպքի, որոնց շարժընթացում արձանագրվել է նվազում 22,1%-ով կամ 255 դեպքով:

Գողությունների վերաբերյալ գործերով գողոնի հայտնաբերման և գողության դեպքերի հաջող բացահայտման գրավականներից է օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունավետ իրականացումը ապրանքների իրացման տարբեր վայրերում: Սակայն, իրացման վայրերից, որպես կանոն, դեպքեր գրեթե չեն բացահայտվել կամ էլ բացահայտումները եղել են տուժողների ակտիվ միջամտության շնորհիվ ու նրանց նախաձեռնությամբ:

Վերլուծությունը ցույց է տվել, որ գողության դեպքերի ընդհանուր թվաքանակի մեջ գերակշռում են այն դեպքերը, երբ միևնույն անձը կամ հանցավոր խումբը, ունենալով հանցավոր անցյալ, իր գործունեությամբ, ապրելակերպով, կապերով, հակումներով հաճախ դուրս մնալով օպերատիվ հետաքրքրության ոլորտից, ոստիկանության տեսադաշտից, անարգել կատարել է բազմաթիվ գողություններ, որոնց զգալի մասը ոստիկանությունում անգամ գրանցված չի եղել: Որևէ դեպքով բացահայտվելուց հետո միայն նշված խմբերը դադարեցրել են իրենց հանցավոր գործունեությունը:

Դեռևս շարունակվում է կատարված հանցագործությունների մասին ոստիկանության մարմիններում քաղաքացիների հաղորդումների չգրանցման և հանցագործության դեպքերը հաշվառումից թաքցնելու արատավոր երևույթը, որի վերաբերյալ համապատասխան հաղորդում է ուղարկվել ՀՀ ոստիկանության պետին:

Փոփոխություններ չեն արձանագրվել ավազակային հարձակման դեպքերի շարժընթացում՝ 2011թ. ընթացքում ՀՀ-ում գրանցվել է ավազակային հարձակման 106 (2010թ.՝ 106) դեպք՝ 67,9% (2010թ.՝ 67,9%) բացահայտման ցուցանիշով:

2011թ. գրանցված կողոպուտի դեպքերը նույնպես նվազել են ընդամենը 12 դեպքով (237-249)՝ բացահայտման ցուցանիշների նվազմամբ՝ 47,7% (2010՝ 64,7%): Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որպես կողոպուտի առավել տարածված ձև շարունակում է մնալ բջջային հեռախոսների և անձանց կողմից կրվող ոսկյա զարդերի բացահայտ հափշտակումը, որի նախականխման և դեպքերի բացահայտման նպատակով ոստիկանության մարմինների համապատասխան ծառայությունները պետք է ակտիվ միջոցառումներ իրականացնեն մարդաշատ վայրերի, մասնավորապես՝ շուկաների, տոնավաճառների, ավտոկանգառների տարածքներում:

2011թ. արձանագրվել է խարդախությամբ գույքի հափշտակության դեպքերի նվազում 125-ով, այդ թվում՝ 73-ով կամ 68,2%-ով պետական կամ հանրային գույքի, իսկ 52-ով կամ 6.9%-ով՝ խարդախությամբ անձնական գույքի հափշտակության դեպքերի:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռևս շարունակվում է քաղաքացիաիրավական վեճերի վերաբերյալ դատական ատյաններում քննված գործերի արդյունքներից դժգոհ մնացած քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների հիման վրա նախապատրաստված նյութերով, ինչպես նաև խարդախությամբ մանր չափերով հափշտակության վերաբերյալ ակնհայտ անհիմն քրեական գործերի հարուցման արատավոր երևույթը, որոնք դատական հեռանկար չեն կարող ունենալ և քննության արդյունքում կարճվում են հանցակազմի կամ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ: Նշված

երևույթները վկայում են դատավարական ղեկավարների կողմից նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ ոչ պատշաճ դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացնելու մասին:

2011թ. արձանագրվել է **տնտեսական գործունեության դեմ ուղղված** գրանցված հանցագործությունների աճ 216 դեպքով կամ 24,1%-ով (1112-896), բացահայտումը կազմել է 74,5% (2010՝ 85,3%):

2011թ. տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններից աճել է կեղծ փողեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու դեպքերի թիվը՝ գրանցվել է 280 (2010՝ 94) դեպք, որոնցից բացահայտվել է ընդամենը 14-ը կամ 5%-ը (2010՝ 3,2%):

Նշված հանցագործությունների շարժընթացում արձանագրված փոփոխությունը պայմանավորված է ինչպես դրանց հայտնաբերմանն ուղղված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ցածր արդյունավետությամբ, այնպես էլ այդ հանցագործությունների գրանցման, հաշվառման և քրեական գործերի հարուցման գործընթացի մշակված խմբավորման հանգամանքով, որի համաձայն՝ կեղծ փողեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու դեպքերը խմբավորվել են ըստ դրոշմման և ձուլման եղանակների:

2011թ. մաքսանենգության դեպքերը նվազել են 18-ով կամ 14,8%-ով՝ գրանցվել է 103 (2010թ՝ 121) դեպք, որոնց բացահայտումը կազմել է 94,2% (2010՝ 95,9%): Մաքսանենգության դեպքերի նվազումը բնավ չի նշանակում, որ իրականում նվազել են այդ բնույթի հանցագործությունները: Նշված հանցագործությունների շարժընթացում արձանագրված փոփոխությունը պայմանավորված է համապատասխան ծառայությունների կողմից իրականացված միջոցառումների ոչ բավարար մակարդակով և դեպքերի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ցածր արդյունավետությամբ:

2011թ. արձանագրվել է ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության դեպքերի նվազում 41-ով կամ 51,2%-ով, գրանցվել է նման հանցագործությունների 39 (2010՝ 80) դեպք, որոնց բացահայտումը կազմել է 97,4% (2010՝ 97,5%):

Նշված դեպքերի հայտնաբերման և բացահայտման արդյունավետության գրավականը՝ քննչական ու օպերատիվ մարմինների պատշաճ փոխհամագործակցությունն է, ինչը, սակայն, ոչ միշտ է ապահովվում:

Այդ նպատակով առանձնահատուկ կարևորվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ և ոստիկանության համապատասխան ծառայությունների միջև ինֆորմացիոն բազայի փոխադարձ մատչելիությունը, որի ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ:

2011թ. նախապատրաստված 7844 (2010թ.՝ 7249) նյութից 3599-ով (2010թ.՝ 3384) հարուցվել է քրեական գործ, 2715-ով (2010թ.՝ 2394) նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է, 858 (2010թ.՝ 964) նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 672-ը (2010թ.՝ 507) մնացել է անավարտ:

2011թ. քննված 5833 (2010թ.՝ 5013) քրեական գործից 1323-ի (2010թ.՝ 1419) նախաքննությունն ավարտվել է, որոնցից 427-ի (2010թ.՝ 337) վարույթը կարճվել է, իսկ 884-ը՝ 1255 անձի (2010թ.՝ 1069-ը՝ 1506 անձ) նկատմամբ, ուղարկվել է դատարան, 2567 (2010թ.՝ 2259) քրեական գործով վարույթ կասեցվել է՝ 2395-ը (2010թ.՝ 2099) հանցագործություն կատարած անձը հայտնի չլինելու, 160-ը (2010թ.՝ 157)՝ մեղադրյալի քննությունից թաքնվելու հիմքով, իսկ 12-ը (2010թ.՝ 3)՝ անհաղթահարելի ուժի հիմքով:

2011թ. մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 884 (2010թ.՝ 977) գործ, 1255 (2010թ.՝ 1370) անձի նկատմամբ, որոնք ընդունվել են դատարանի վարույթ: Հիշյալ քրեական գործերով 1255 անձից 507-ը կալանավորվել է:

2011թ. դատարաններում քննվել է սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 920 գործ 1282 անձի վերաբերյալ, որոնցից 831 գործով 1173 անձ դատապարտվել է, 10 գործով 16 անձ արդարացվել, իսկ 79 անձի վերաբերյալ 66 քրեական գործով վարույթը կարճվել է:

Դատապարտվածներից 784-ը (2010թ.՝ 848) կամ 66,8%-ը (2010թ.՝ 63,2%) դատապարտվել են ազատազրկման, 4-ը (2010թ.՝ 3) կամ 0,3%-ը (2010թ.՝ 0,2%)՝ կալանքի, 204-ը (2010թ.՝ 93) կամ 17,4%-ը (2010թ.՝ 6.9%)՝ տուգանքի: Դատապարտվածներից 181-ի (2010թ.՝ 373) կամ 15,4%-ի (2010թ.՝ 27,8%) նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել

է փորձաշրջան, իսկ 6 (2010թ.՝ 28) անձի կամ 0,5%-ի (2010թ.՝ 2%) նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածի կիրառմամբ: Դատապարտված անձանցից 13-ի պատիժը կրճատվել է, իսկ 293-ը պատժից ազատվել է համաներման ակտի հիման վրա, 13 գործով 14 անձի (2010թ.՝ 14 գործ, 14 անձ) նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ: Դատապարտվածներից 47-ը (2010թ.՝ 26) կամ 4%-ը (2010թ.՝ 1.9%) ազատվել է նախնական կալանքից՝ ազատազրկման հետ կապ չունեցող պատժի նշանակմամբ: Նախնական կալանքի տակ չգտնված անձանցից 113-ը (2010թ.՝ 84) կամ 9,6%-ը (2010թ.՝ 6,2%) դատապարտվել է ազատազրկման, իսկ 1-ը (2010թ.՝ 2) կալանքի:

2011թ. սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դատարանում քննված 37 քրեական գործից 17-ով 19 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

2011թ. սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով հանցագործությամբ պետությանը պատճառվել է 335.519.503 (2010թ.՝ 267.848.049) դրամի նյութական վնաս, որից վերականգնվել է 146.386.015 (2010թ.՝ 52.902.912) դրամը:

2011թ. <u>ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչությունը</u> հսկողություն է իրականացրել ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում նախապատրաստված 233 նյութի (2010թ.՝ 217) նկատմամբ, որոնցից 128-ով (2010թ.՝ 160) հարուցվել են քրեական գործեր, 93-ով (2010թ.՝ 57) մերժվել է քրեական գործի հարուցումը, այդ թվում՝ հանցակազմի կամ հանցադեպի բացակայության հիմքով՝ 48-ը (2010թ.՝ 30), ոչ արդարացման հիմքով՝ 45-ը (2010թ.՝ 27):

2011թ. վարույթ է ընդունվել 158 (2010թ. 188) գործ, այդ թվում՝ հարուցվել է 128-ը (2010թ. 158), ավարտվել է 103 (2010թ.՝ 103) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 74-ը (2010թ.՝ 91) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար, 29 (2010թ.՝ 10) քրեական գործի վարույթ կարճվել է, քննչական ենթակայության կարգով այլ մարմիններ է ուղարկվել 24-ը (2010թ.՝ 41), 3 (2010թ.՝ 7) քրեական գործի վարույթ միացվել է, իսկ 35-ի վարույթը կասեցվել (2010թ.՝ 29), այդ թվում՝ մեղադրյալների քննությունից թաքնվելու հիմքով՝ 11-ը (2010թ.՝ 5), այլ հիմքերով՝ 9-ը (2010թ.՝ 9), իսկ հանցագործությունը չբացահայտվելու հիմքով՝ 15-ը (2010թ.՝ 15):

2012թ. հունվարի 1-ի դրությամբ անավարտ է մնացել 49 (2010թ.՝ 56) քրեական գործ:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացման) վերաբերյալ 2011թ. ընթացքում հանրապետությունում, ընդհանուր առմամբ, նախաքննական մարմինների վարույթում քննվել է 14 քրեական գործ:

2011թ. ընթացքում վարչության դատախազների կողմից 69 գործով 148 անձի նկատմամբ (2010թ.՝ 72 գործ, 123 անձ) պաշտպանվել է մեղադրանքը դատարանում և նշված գործերով ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 110 անձի (2010թ.՝ 104) նկատմամբ, կալանք՝ 0, տուգանք՝ 21-ի (2010թ.՝ 14), ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն պատիժ չի կիրառվել 2-ի նկատմամբ (2010թ.՝ 5), ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել է 3-ը (2010թ.՝ 4), համաներման կիրառմամբ նշանակված պատիժներից ազատվել է 36-ը (2010թ.՝ 18):

2011թ. ընթացքում ընդհանուր իրավասության դատարաններում արագացված դատական քննության կարգով քննվել է 30 գործ 43 անձի նկատմամբ (2010թ.՝ 44 գործ, 66 անձ):

2011թ. ընթացքում պետությանն ընդհանուր առմամբ պատճառվել է է 1.438.198.358 (2010թ.՝ 757.961.911) դրամ գույքային վնաս, որը հիմնականում առաջացել է մաքսանենգության դեպքերով, որից վերականգնվել է 856.185.080 (2010թ.՝ 264.595.243) դրամը:

Հայաստանի Հանրապետությունում 2011թ. գրանցվել է <u>ընդհանուր բնույթի հանցագործությունների</u> 2838 (2010թ.՝ 2794) դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 75-ով կամ 2,5%-ով:

2011թ. արձանագրվել է հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի 151-ով կամ 8,7%-ով աճ (1882-1731):

2011թ. ճանապարհատրանսպորտային հանցագործություններն աճել են 70 դեպքով (883-953), 13-ով աճել են նաև մահվան ելքով դեպքերը (182-195): Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեպքերի աճը հիմնականում պետք է բացատրել ՀՀ տարածք մեծաքանակ

արտասահմանյան ավտոմեքենաների ներկրմամբ և, հետևաբար, դրանց քանակի ավելացմամբ, ճանապարհային երթևեկության նշանների, ինչպես նաև ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների ոչ բավարար քանակով, ինչպես նաև, որքան էլ տարօրինակ է, բարեկարգված փողոցների առկայությամբ և այդ երթուղիներում սահմանված արագությունից բարձր արագությամբ երթևեկելով:

Հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության դեպքերով 2011թ. գրանցվել է հանցագործության կատարման 448 դեպք (2010թ.՝ 475), դեպքերը նվազել են 27-ով կամ 12,6%-ով: Զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի պահպանության պարտականությունը ոչ պատշաճ կատարելը կամ չկատարելը, ինչպես նաև դրանց ապօրինի շրջանառության դեպքերը, վկայում են ազգաբնակչության մոտ ապօրինի պահվող հրազենի և ռազմամթերքի առկայության մասին:

2011թ. արձանագրվել է խուլիգանության 481 (2010թ.՝ 373) դեպք, դեպքերն աճել են 108-ով կամ 29% -ով, չի բացահայտվել 18-ը (2010թ.՝ 7), 95 դեպքով կամ 4,3%-ով նվազել են կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները (2128-2223), 10-ով կամ 15,3%-ով նվազել են իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը, 97-ով կամ 9%-ով նվազել են (2010թ.՝ 900) ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայություններից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու դեպքերը: Խուլիգանության դեպքերի աճը վկայում է այս բնույթի հանցագործություններով դատախազության, զինկոմիսարիատի և ոստիկանության աշխատակիցների կողմից համագործակցված լուրջ աշխատանքներ կատարելու անհրաժեշտության մասին:

2011թ. ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով իրականացվել է 6786 նյութի նկատմամբ դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն, որոնցից 4077 նյութով մերժվել է քրեական գործի հարուցումը, որոնցից վերացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 42 որոշում:

2011թ. հարուցված 2235 քրեական գործով իրականացվել է դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն, որոնցից 1412 գործով կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում, որոնցից 34-ը վերացվել է: 1117 քրեական գործ կասեցվել է: Վերացվել է քրեական գործի վարույթը կասեցնելու 34 որոշում:

2011թ. ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերի վերաբերյալ դատարաններ է ուղարկվել 730 քրեական գործ (2010թ.՝ 832) 1042 անձի նկատմամբ (2010թ.՝ 1178), որոնցից ազատազրկման է դատապարտվել 396-ը (2010թ.՝ 380), կալանքի՝ 25-ը (2010թ.՝ 33), տուգանքի՝ 390-ը (2010թ.՝ 413), հիմնական այլ պատիժների՝ 3-ը (2010թ.՝ 7), պատիժը պայմանականորեն չի կիրառվել 79 (2010թ.՝ 165) անձի նկատմամբ, ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը կիրառվել է 4 (2010թ.՝ 5) անձի նկատմամբ, կարճվել է 87 գործ 110 (2010թ.՝ 22) անձի վերաբերյալ, արդարացվել է 8-ը (2010թ.՝ 10), ՀՀ քր. դատ. օր-ի 309^1-րդ հոդվածով դատաքննությունը հետաձգվել է 0 (2010թ.՝ 3) գործով, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են կիրառվել 13 (2010թ.՝ 13) անձի նկատմամբ:

Դատարաններում քննված 730 քրեական գործով 1042 անձի վերաբերյալ դատական քննության արագացված կարգ կիրառվել է 339 գործով 447 անձի նկատմամբ (2010թ.՝ 225 քրեական գործով 281 անձ):

2011թ. ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով պատճառված նյութական վնասի չափը կազմել է 18.956.950 ՀՀ դրամ, պետական գույքին պատճառված վնասի չափը՝ 13.276.000 ՀՀ դրամ, ֆիզիկական անձանց գույքին պատճառված վնասի չափը՝ 5.580.950 ՀՀ դրամ, պատճառված նյութական վնասի վերականգնման համար գույքի վրա կալանք է դրվել 2.177.400 գումարի չափով, ավարտված դատաքննությամբ վերականգնվել է հանցագործությամբ պատճառված 9.876.950 ՀՀ դրամի չափով նյութական վնաս, պետական գույքին պատճառված վնասի չափից վերականգնվել է 5.653.000-ը, ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասի վերականգնման չափից 4.223.950-ը, մերժված նյութերով պատճառված վնասի չափը կազմել է 9.707.800 ՀՀ դրամ, վերականգնվել է 6.602.800-ը:

<u>Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում</u> 2011թ. գրանցվել է 1525 (2010թ.՝ 1524) հանցագործության դեպք, այսինքն՝ դեպքերն ավելացել են 1-ով կամ 0,07%-ով:

Արձանագրված դեպքերից բացահայտվել է 1244-ը (2010թ.`1206), չի բացահայտվել 125-ը (2010թ.` 187): Բացահայտումը նախորդ տարվա 86,6%-ի դիմաց կազմել է 90,9%, այսինքն՝ աճել է 4,3%-ով:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ դեպքերի աճը պայմանավորված է օպերատիվ-հետախուզական, ինչպես նաև քննչական և դատախազական հսկողության արդյունավետ համագործակցությամբ:

2011թ. թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններ կատարելու համար քրեական պատասխանատվության է ենթարկվել 711 (2010թ.՝ 854) անձ: ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկա և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն փորձաքննության ներկայացված 1631 անձից հաշվառման է վերցվել 1130-ը, որոնցից 18-ը՝ կանայք, 27-ը՝ օտարերկրացի, որից 22-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ:

2011թ. հանրապետությունում գրանցվել է նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առնչվող 291 (2010թ.՝ 296) վարչական իրավախախտում, որոնցից առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելու համար (ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 44.2 հոդված) վարչական պատասխանատվության է ենթարկվել 283 (2010թ.՝ 295) անձ: Ապօրինաբար ձիթախաշխաշ կամ կանեփ ցանելու կամ աճեցնելու համար (ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 110^2 հոդված) վարչական պատասխանատվության է ենթարկվել 8 (2010թ.՝ 1) անձ:

2011թ. քննվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առնչվող հանցագործությունների վերաբերյալ 1653 (2010թ.՝ 1655) քրեական գործ, որոնցից բացահայտվել է 1308-ը (2010թ.՝ 1292), չի բացահայտվել 187-ը (2010թ.՝ 230): Բացահայտումը նախորդ տարվա 84,9%-ի դիմաց կազմել է 87,5%, այսինքն՝ աճել է 2,6%-ով:

2010թ.-ից 2011թ. է փոխանցվել 133, իսկ 2011թ.-ից 2012թ.՝ 158 քրեական գործ:

2011թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ քննված 1653 (2010թ.՝ 1655) քրեական գործի նկատմամբ, որոնցից 1195-ը (2010թ.՝ 1261) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 187-ը (2010թ.՝ 230) կասեցվել է, 113-ը (2010թ.՝ 158)՝ կարճվել է, 158-ը՝ մնացել անավարտ:

2011թ. դատարաններ ուղարկված 1195 (2010թ.՝ 1261) քրեական գործից դատաքննությունն ավարտվել է 421 քրեական գործով՝ 603 անձի նկատմամբ, որոնցից 386 քրեական գործով 581 անձի նկատմամբ արձակվել է մեղադրական դատավճիռ, 4-ով՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 464-րդ հոդվածի կարգով կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ 51 քրեական գործի վարույթ կարճվել է:

Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինները որոշակի աշխատանք են կատարել **<u>կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով</u>** օրինականության պահպանման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության և այդ բնագավառին վերաբերող դատախազական գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2011թ. նախապատրաստվել է կոռուպցիոն բնույթի 913 (2010թ.՝ 895) նյութ՝ նախորդ տարվա համեմատ 18-ով ավելի, որոնցից 395-ով (2010թ.՝ 385) հարուցվել է քրեական գործ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 10-ով: Հարուցված քրեական գործերի թվաքանակի աճը պայմանավորված է այս ոլորտում դատախազական հսկողության արդյունավետության բարձրացմամբ:

Նախապատրաստված 402 (2010թ.՝ 402) նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 226-ը (2010թ.՝ 213)՝ արդարացման, իսկ 176-ը (2010թ.՝ 189)՝ ոչ արդարացման հիմքերով, գերակշռությամբ՝ պատճառված նյութական վնասները հատուցելու հիմքով:

2011թ. ընթացքում ավարտվել է 279 (2010թ.՝ 375) քրեական գործ, 143 (2010թ.՝ 158) քրեական գործի վարույթ կարճվել է՝ 56-ը (2010թ.՝ 58)՝ արդարացման, 87-ը (2010թ.՝ 100)՝ ոչ արդարացման հիմքերով:

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերով 48 (2010թ.՝ 54) անձ գտնվել է նախնական կալանքի տակ:

Ընթացք տրված քրեական գործերից 28 (2010թ.՝ 41) անձի վերաբերյալ վարույթները կասեցվել են, որոնցից 23-ը (2010թ.՝ 31) անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 5-ը՝ այլ հիմքով:

2011թ. անավարտ է մնացել ընդհանուր հաշվով 240 (2010՝ 124) քրեական գործ, որոնցով 25 (2010թ.՝ 14) անձ գտնվել է կալանքի տակ:

2011թ. դատարաններում քննվել է կոռուպցիոն բնույթի ընդամենը 129 քրեական գործ՝ 189 անձի նկատմամբ (2010թ.՝ 150 քրեական գործ՝ 193 անձի նկատմամբ) կամ 21 գործով և 4 անձով պակաս, որոնցից դատապարտվել է 109 քրեական գործով 158 անձ (2010թ.՝ 144 քրեական գործով 182 անձ), կամ 35 գործով և 24 անձով պակաս:

2011թ. 50 քրեական գործով 73 անձի նկատմամբ (2010թ.՝ 74 գործով 94 անձի նկատմամբ) կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

Դատապարտված 158 անձից 68-ը կամ դատապարտված անձանց 43%-ը եղել է պաշտոնատար անձ (2010թ.՝ 182-ից 103-ը կամ 56,6%-ը):

Դատապարտված անձանցից 102-ը (2010թ.՝ 102) ենթարկվել է ազատազրկման ձևով պատժի, 41-ը (2010թ.՝ 60)՝ տուգանքի, մյուսները՝ այլ պատիժների:

Դատաքննության արդյունքներով 73(2010թ.՝ 50) անձ պատժից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ, իսկ 7 գործով 10 անձի նկատմամբ արձակվել է արդարացման դատավճիռ (2010թ.՝ 4 անձի նկատմամբ):

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով դատարաններում լսված բոլոր քրեական գործերով պատճառվել է ընդհանուր 2.784.783.000 դրամ նյութական վնաս, (2010թ.՝ 4.553.173.000), որից պետությանը պատճառված վնասը կազմել է 2.765.166.000 դրամ (2010թ.՝ 4.357.838.000): Պետությանը պատճառված նյութական վնասից վերականգնվել է 157.169.000 դրամը կամ 0,6%-ը (2010թ.՝ 112.037.000 կամ 2,6 %):

Ոչ արդարացման հիմքով կարճված քրեական գործերով հանցագործություններով պատճառված նյութական վնասը կազմել է 470.515.000 (2010թ.՝ 616.514.000) դրամ, իսկ մերժված նյութերով՝ 3.203.396.000 (2010թ.՝ 2.804.183.000) դրամ, որոնցից վերականգնվել է կարճված գործերով 193.389.000 (2010թ.՝ 366.463.000) դրամ, մերժված նյութերով 2.656.067.000 (2010թ.՝ 2.490.791.000) դրամ, այսինքն՝ կարճված քրեական գործերով վերականգնումը կազմում է 41,1%, իսկ մերժված նյութերով՝ 82,9%:

2011թ. <u>պետական շահերի պաշտպանության</u> բնագավառում ՀՀ դատախազության կողմից կատարվել է 417 ստուգում (2010թ.՝ 433), հայտնաբերվել է 487 (2010թ.՝ 553) իրավախախտում, պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 437 (2010թ.՝ 271) անձ, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով նախապատրաստվել է 246 (2010թ.՝ 211) նյութ, որոնցով հարուցվել է 171 (2010թ.՝ 203) հայց և 81 (2010թ.՝ 91) քրեական գործ, կամովին պետբյուջե է վերականգնվել 815.894.853 (2010թ.՝ 972.457.862) դրամ:

2011թ. պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով, ինչպես նաև պետական շահերի խախտման վերաբերյալ ստացված հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերով, հարուցվել է 111 (2010թ.՝ 123) քրեական գործ, որոնցից ավարտվել է 53 (2010թ.՝ 66) գործի քննություն՝ դատարան է ուղարկվել 32 (2010թ.՝ 45), կարճվել է 21 (2010թ.՝ 21) քրեական գործ, մինչդատական վարույթի ընթացքում վերականգնվել է 108.959.029 (2010թ.՝ 173.152.217) դրամ, իսկ դատաքննության ընթացքում՝ 4.896.249 (2010թ.՝ 29.819.617) դրամ:

2011թ. դատարան է հարուցվել 267 հայց՝ 2.213.038.000 դրամի (2010թ.՝ 260 հայց՝ 1.839.014.000 դրամի) բռնագանձման պահանջով:

Դատարաններում քննվել է 211 (2010թ.՝ 194) հայց, որոնցից բավարարվել է 984.226.000 (2010թ.՝ 1.381.282.000) դրամի հայցապահանջով 157 (2010թ.՝ 162) հայց, մերժվել է 17 (2010թ.՝ 7), կարճվել՝ 22 (2010թ.՝ 14) գործի վարույթ: Դատաքննության ընթացքում փաստացի վերականգնվել է 207. 748.000 (2010թ.՝ 103.154.000) դրամ:

ՀՀ դատախազությունը բերել է 30 վերաքննիչ բողոք, բավարարվել է 11-ը, 9 բողոք մերժվել է, իսկ 10-ը դեռևս չեն քննարկվել:

2011թ. պետական մարմիններից ստացվել է ստորադաս դատարանների դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ 35 միջնորդություն (2010թ.՝ 54), որոնց քննարկման, ինչպես նաև

առանց միջնորդությունների դատական ակտեր բողոքարկելու նպատակով, դատարաններից պահանջվել և ուսումնասիրվել են քաղաքացիական և վարչական գործերը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը բերել է 47 վճռաբեկ բողոք, բավարարվել է 2-ը:

2011թ. պետական շահերին վնաս պատճառելու վերաբերյալ գործերով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած 47 (2010թ.՝ 39) վճռաբեկ բողոքի գումարը կազմել է 1.235.891.000 (2010թ.՝ 1.491.654.000) դրամ, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բավարարված բողոքների գումարը կազմել է ընդամենը 15.804.300 (2010թ.՝ 79.500.000) դրամ, վերադարձված բողոքների գումարը՝ 983.874.000 (2010թ.՝ 955.200.000) դրամ:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման բնագավառում՝ 2011թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և հոգեբուժական հաստատություններում կատարվել է 156 հանցագործություն 192 անձի (2010թ.՝ 242 հանցագործություն, 269 անձ) կողմից, այդ թվում՝ թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության 124 (2010թ.՝ 193) դեպք, որոնցից 74-ը (2010թ.՝ 132) թմրամիջոցների իրացման, 50-ը (2010թ.՝ 61)՝ առանց իրացնելու նպատակի, 6-ը (2010թ.՝ 4)՝ ինքնասպանության հասցնելու և 8-ը (2010թ.՝ 13)՝ ինքնասպանության փորձի, 4-ը (2010թ.՝ 6)՝ պատիժն ի կատար ածող հիմնարկի գործունեությանը խոչընդոտելու, 1-ը (2010թ.՝ 2)՝ ՔԿՀ-ից փախուստի, 4-ը (2010թ.՝ 5)՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 3-ը (2010թ.՝ 4)՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 3-ը (2010թ.՝ 1)՝ ծեծի, 1-ը՝ անձնական ունեցվածքի գողության, 1-ը՝ խարդախության , 1-ը (2010թ.՝ 2)՝ խուլիգանության:

2011թ. ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում մահացել է 32 դատապարտյալ (2010թ.՝ 37), որոնցից 6-ը ինքնասպանություն գործելու (2010թ.՝ 4) եղանակով: Նշված 6 դեպքով հարուցվել են քրեական գործեր և կատարվել է նախաքննություն, 26 դատապարտյալի մահվան փաստերով նախապատրաստվել են նյութեր, պարզվել են մահվան պատճառները և որոշումներ են կայացվել հանցադեպի կամ հանցակազմի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Անավարտ է մնացել այդ բնույթի 4 նյութի ընթացքը:

2011թ. անչափահասների կողմից կամ անչափահասների դաստիարակչական հսկողություն իրականացնող հաստատություններում հանցագործությունների դեպքեր չեն արձանագրվել (2010թ.՝ 0):

2011թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել 283 (2010թ.՝ 370) նյութի նախապատրաստման նկատմամբ, որոնցից 51-ը (2010թ.՝ 289-ը) վերաբերել է նախաքննությանը, իսկ 232-ը՝ (2010թ.՝ 81) հետաքննությանը: 283 նյութից 134-ով հարուցվել են քրեական գործեր: Հարուցված 134 քրեական գործից 17-ը եղել է մարդու դեմ ուղղված, 2-ը՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված, 4-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործությունների, իսկ 111-ը թմրամիջոցների ապօրինի շրջանառության փաստերով նախապատրաստված նյութերով:

Նախապատրաստված 144 նյութով մերժվել է քրեական գործի հարուցումը: Մերժված նյութերից 124-ը եղել է մարդու դեմ ուղղված, 2-ը՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված, 6-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործությունների և 12-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության փաստերով նախապատրաստված նյութեր, մերժված 144 նյութից 137-ը մերժվել է արդարացման և միայն 7-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

2011թ. ընթացքում անավարտ է մնացել 22 նյութ, որոնք փոխանցվել են 2012թ.:

2011թ. ընթացք է տրվել 205 քրեական գործի, որոնցից 56-ը փոխանցվել է 2010 թվականից, իսկ 149-ը հարուցվել և վարույթ է ընդունվել 2011թ. ընթացքում:

2011թ. քննված 190 քրեական գործից ավարտվել է 91-ը (2010թ.՝ 102-ը), որոնցից 15-ը կարճվել է, իսկ 76-ը՝ 98 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ: 14-ը կարճվել է արդարացման հիմքով: Կասեցվել է 69 քրեական գործի վարույթ:

2011թ. վարույթում քննված 3 քրեական գործ ըստ ենթակայության ուղարկվել է այլ մարմիններ՝ հետագա ընթացքը լուծելու համար: Անավարտ է մնացել 27 գործ:

2011թ. մեղադրական եզրակացությամբ դատարաններ է ուղարկվել 64 (2010թ.՝ 84) քրեական գործ՝ 90 (2010թ.՝ 114) անձի նկատմամբ, որոնք բոլորն էլ դատարանների կողմից ընդունվել են վարույթ:

Դատարաններում քննված 64 (2010թ.՝ 66) գործից 21-ով 26 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ: Արագացված կարգի կիրառմամբ քննված բոլոր 21 գործով դատի տրված 26 անձ դատապարտվել է ազատազրկման, որոնցից 1-ի նկատմամբ (կին) ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված «ազատազրկում» պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

2011թ. դատարանների կողմից բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումներ են կայացվել անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 44 (2010թ.՝ 51) անձի նկատմամբ: Դատարանների որոշումներով 3 անձի նկատմամբ նշանակվել է հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում, 27 անձի նկատմամբ՝ հարկադիր բուժում ընդհանուր տիպի հոգեբուժական հիվանդանոցում, իսկ 14 անձի նկատմամբ՝ հատուկ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:

2011թ. քննված 64 գործից 1-ով (ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 2-րդ մաս) հանցագործությամբ ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասը կազմել է 120000 ՀՀ դրամ, որը չի վերականգնվել:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011թ. ԱԺՈ-277-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, 2011թ. մայիսի 26-ից մինչև դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ ԱՆ ՔԿՎ քրեակատարողական հիմնարկներից պատժի հետագա կրումից ազատվել է 602 դատապարտյալ, 450 դատապարտյալի նկատմամբ պատժի չկրած մասը կրճատվել է: ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից նախաքննության մարմինների և դատարանների կողմից ՀՀ ԱԺ «Համաներում հայտարարելու մասին» որոշման կիրառման արդյունքում ազատվել է 349 անձ: ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման ծառայության տարածքային ստորաբաժանումներում հաշվառված դատապարտյալներից համաներման որոշման հիման վրա 30.12.2011թ. դրությամբ ազատվել է 1301 դատապարտյալ: 01.01.2012թ.-ի դրությամբ կալանավորվածների և ազատազրկման վայրերում պատիժ կրող դատապարտյալների թիվը կազմել է 4532, կամ 610-ով պակաս, քան 01.01.2011թ.-ի դրությամբ: 2011թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 2642 անձ:

<u>Վերը նշված ոլորտներում դատախազական աշխատանքի ամփոփ տվյալներ.</u>

2011 թվականի ընթացքում ՀՀ դատախազության կողմից դատավարական ղեկավարում ՝դատախազական հսկողություն է իրականացվել 26138 (2010թ.՝ 25049) նյութի նախապատրաստման, 12928 (2010թ.՝ 12156) քրեական գործի հետաքննության և նախաքննության նկատմամբ: Դատախազների կողմից վերացվել է հետաքննության և նախաքննության մարմինների կողմից կայացված 397 (2010թ.՝ 387) որոշում: Քրեական գործերով և նյութերով հետաքննության և նախաքննության մարմիններին տրվել է 2322 (2010թ.՝ 2524) գրավոր ցուցում: Մինչդատական վարույթում դատախազների կողմից դատարան է ներկայացվել, ինչպես նաև դատախազների մասնակցությամբ քննվել է 40 (2010թ.՝ 66) միջնորդություն (որպես խափանման միջոց կիրառվել են կալանքը, խուզարկության և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ): Դատարանում մեղադրանքը պաշտպանվել է 2684 (2010թ.՝ 2900) քրեական գործով: Դատախազների կողմից քրեական գործերով դատական ակտերի՝ դատավճիռների, վճիռների և որոշումների դեմ բերվել է 242 (2010թ.՝ 217) վերաքննիչ և 135 (2010թ.՝ 113) վճռաբեկ բողոք: Ընդ որում, 242 (2010թ.՝217) վերաքննիչ բողոքից բավարարվել է 43-ը (2010թ.՝ 75), իսկ 135 (2010թ.՝ 113) վճռաբեկ բողոքից՝ 9-ը (2010թ.՝ 18): ՀՀ դատախազության կողմից հարուցվել է 268 (2010թ.՝ 262) հայց, որոնցից պետական շահերի պաշտպանության մասով դատարանի կողմից քննության է առնվել 211-ը (2010թ.՝ 194), բավարարվել է 157-ը (2010թ.՝ 162): Կատարվել է 2227 (2010թ.՝ 2056) ստուգում, ուսումնասիրություն, ամփոփում: Ներկայացվել է 916 (2010թ.՝ 800) նախազգուշացում, հաղորդում և միջնորդագիր: Ընթացք է տրվել 11016 (2010թ.՝10288) դիմումի, բողոքի, առաջարկության:

<u>ՀՀ զինվորական դատախազության կողմից</u> 2011թ. ՀՀ ԶՈՒ-ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 4530 (2010թ.՝ 3935) դեպք: Արձանագրվել է աճ 595 դեպքով կամ 15,1%-ով: Արձանագրված դեպքերից 2997 (2010թ.՝ 2704) կամ 66,1%-ը (2010թ.՝ 68,7%-ը) եղել են

պատահարներ, 1503-ը (2010թ.՝ 1187) կամ 33,2%-ը (2010թ.՝ 30,2%) հանցագործություններ, այդ թվում՝ 1090-ը (2010թ.՝ 756) կամ 72,5%-ը (2010թ.՝ 63,7%)՝ զինվորական, 413-ը (2010թ.՝ 431) կամ 27,5%-ը (2010թ.՝ 36,6%)՝ այլ ընդհանուր, 30 (2010թ.՝ 44) դեպքի կամ 0,7%-ի (2010թ.՝ 1,1%) հանգամանքները դեռևս չեն պարզվել:

Նախորդ տարվա համեմատ պատահարներն աճել են 293 դեպքով կամ 10,8%-ով, հանցագործությունները՝ 316-ով կամ 26,6%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները աճել են 334-ով կամ 44,2%-ով, իսկ այլ հանցագործությունները նվազել են 18-ով կամ 4,2%-ով:

2011թ. արձանագրված 1503 (2010թ.՝ 1187) հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 119-ը (2010թ.՝ 146) կամ 7,9%-ը (2010թ.՝ 12,3%), որոնցից 71-ը (2010թ.՝ 100)՝ ծանր, 48-ը (2010թ.՝ 46)՝ առանձնապես ծանր, այսինքն, նախորդ տարվա համեմատ, ծանր հանցագործությունները նվազել են 29, իսկ առանձնապես ծանր հանցագործություններն աճել են 2-ով դեպքով:

2011թ. արձանագրվել է ծառայության հետ կապված մահվան 36 (2010թ.՝ 43) դեպք, որի հետևանքով մահացել է 36 (2010թ.՝ 54) զինծառայող, որոնցից հակառակորդի կողմից սպանության՝ 10 (2010թ.՝ 11), սպանության՝ 2 (2010թ.՝ 12), ականի պայթյունից՝ 1, ԶՕԿ-ի խախտման հետևանքով՝ 2 (2010թ.՝ 4), ինքնասպանության՝ 5 (2010թ.՝ 3), ինքնասպանության հասցնելու՝ 4 (2010թ.՝ 3), բռնարարքի՝ 2 (2010թ.՝ 1), հիվանդություններից՝ 3 (2010թ.՝ 9), ավտովթարից՝ 6 (2010թ.՝ 6) և դժբախտ պատահարների հետևանքով՝ 1 (2010թ.՝ 5):

2011թ. ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 1508 (2010թ.՝ 1826) զինծառայող, այսինքն՝ նվազում է արձանագրվել 318-ով կամ 17,4%-ով:

2011թ. հանցագործությունների բացահայտումը կազմել է 97,9 % (2010թ.՝ 97,4%):

2011թ. նախապատրաստվել է 5900 նյութ (2010թ.՝ 5349), որոնցից 1771-ը՝ քննչական (2010թ.՝ 1902), 4129-ը (2010թ.՝ 3447)՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից: Քննչական ստորաբաժանումների կողմից նախապատրաստված 1771 նյութից 1158-ով (2010թ.՝ 795) հարուցվել է քրեական գործ, 359-ը (2010թ.՝ 871) մերժվել է, 40 (2010թ.՝ 46) նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, 186 (2010թ.՝ 123) նյութ միացվել է այլ նյութերի և քրեական գործերի, իսկ 28 (2010թ.՝ 67) նյութ փոխանցվել է 2012թ.: Մերժված 359 նյութի օրինականությունը ստուգվել, վերստուգվել և հաստատվել է, իսկ 17 նյութով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացվել է: Դրանցից 11-ը վերացվել է կայազորների զինվորական դատախազությունների դատախազների, 6-ը՝ ՀՀ ԶԿԴ քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնի դատախազների կողմից:

2011թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել ՀՀ ՊՆ ՔԾ բաժինների վարույթում քննվող 2070 քրեական գործի նկատմամբ, այդ թվում՝ 26-ը (2010թ.՝ 1225)՝ կրկնակի: Դրանցից 147-ը (2010թ.՝ 124) փոխանցված է եղել նախորդ տարվանից, 1609-ը (2010թ.՝ 847) հարուցվել է հաշվետու տարում, որոնցից 1158-ը (2010թ.՝ 771)՝ քննչական մարմնի, 451-ը (2010թ.՝ 76)՝ կայազորների զինվորական դատախազների կողմից, 127-ը (2010թ.՝ 110) ստացվել է այլ մարմիններից, 31-ը (2010թ.՝ 10) անջատվել է այլ քրեական գործերից, 130-ով (2010թ.՝ 126) վերսկսվել է նախաքննությունը, 26-ը (2010թ.՝ 8) դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության:

2011թ. ավարտված քրեական գործերից 936-ը՝ 1260 անձի (2010թ.՝ 674 գործ, 936 անձ) նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 435 (2010թ.՝ 186) քրեական գործով վարույթը կարճվել է:

2011թ. 152 (2010թ.՝ 113) քրեական գործով վարույթը կասեցվել է: 109 (2010թ.՝ 45) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 63-ը (2010թ.՝ 52) միացվել է այլ գործի, 351-ը (2010թ.՝ 147) փոխանցվել 2012թ.:

2011թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են հանցագործություններով պետությանը 63.101.871 (2010թ.՝ 133.346.049) դրամի վնասի պատճառման փաստերը, որից մինչդատական վարույթում վերականգնվել է 45.964.432 (2010թ.՝ 109.440.101) դրամը:

2011թ. զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության կողմից մեղադրական

եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 936 քրեական գործ՝ 1260 անձի (2010թ.՝ 674 գործ, 936 անձ) վերաբերյալ, իսկ 1 քրեական գործ 1 անձի (5 գործ, 5 անձ) նկատմամբ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ: Դատարան ուղարկված բոլոր գործերն էլ ընդունվել են վարույթ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ 752 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 975 անձ (2010թ.՝ 617 գործ, 874 անձ):

Դատարանների որոշումներով 113 քրեական գործ 160 անձի (2010թ.՝ 7 գործ, 16 անձ) վերաբերյալ կարճվել է: 160 (2010թ.՝ 30) անձ պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ: 1 գործով 1 անձի վերաբերյալ և 2 առանձին գործերով 2 անձի մասով կայացվել է արդարացման դատավճիռ (2010թ.՝ 1 գործ, 2 անձ):

Նախորդ տարվա համեմատությամբ 135-ով ավելացել է դատավճռի կայացմամբ ավարտված քրեական գործերի և 101-ով՝ դատապարտվածների թիվը:

Դատապարտված 975 անձից 1-ը (2010թ.՝ 1) դատապարտվել է ցմահ ազատազրկման, 313-ը (2010թ.՝ 227)՝ ազատազրկման, 287-ը (2010թ.՝ 246)՝ կալանքի, 195-ը (2010թ.՝ 97)՝ կարգապահական գումարտակում պահելու, 32-ը (2010թ.՝ 82)՝ տուգանքի, պատիժը պայմանականորեն չի կիրառվել ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ 147 (2010թ.՝ 221) անձի նկատմամբ, 2 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը: Դատապարտվածներից 35-ը նախնական կալանքից ազատվել է այլ պատժի նշանակմամբ, որոնցից 18-ը (2010թ.՝ 15) համաներման ակտի կիրառմամբ, իսկ ազատազրկման է դատապարտվել նախնական կալանքի տակ չգտնվող 131 (2010թ.՝ 58) անձ: Դատապարտվածներից 1 անձի նկատմամբ նշանակվել է նաև լրացուցիչ պատիժ: 1 գործով 1 (2010թ.՝ 4) անձի նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

2011թ. իրականացվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով 591 (2010թ.՝ 301) ուսումնասիրություն, նախորդ տարվանից 290 ուսումնասիրությամբ կամ 96,3%-ով ավելի: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է պետության գույքային շահերի 402 (2010թ.՝ 459) խախտում, պետությանը պատճառված 953.506.700 (2010թ.՝ 686.290.800) դրամի վնաս՝ նախորդ տարվանից 267.215.900 դրամով կամ 39%-ով ավելի: Փաստացի վերականգնվել է պետությանը պատճառված 933.895.400 (2010թ.՝ 503.629.300) դրամի վնաս՝ նախորդ տարվանից 430.266.100 դրամով կամ 85,4%-ով ավելի, որից 614.201.900 (2010թ.՝ 459.123.300) դրամը արտադատական կարգով և 319.693.500 (2010թ.՝ 44.506.000) դրամը պետական շահերի պաշտպանության հայցերի բավարարման արդյունքում:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախապատրաստվել և քննչական մարմիններին է փոխանցվել 81 (2010թ.՝ 41) նյութ, որը 40-ով կամ 97,5%-ով ավելի է նախորդ տարվանից, հարուցվել է պետական շահերի պաշտպանության 25 (2010թ.՝ 31) հայց՝ ընդհանուր առմամբ 11.148.200 (2010թ.՝ 88.048.000) դրամ բռնագանձելու պահանջի մասին:

Նախապատրաստված նյութերով քննչական մարմինների կողմից հարուցվել է 45 (2010թ.՝ 18) քրեական գործ՝ 27 քրեական գործով կամ 150%-ով ավելի նախորդ տարվանից:

Նախապատրաստված նյութերով և հարուցված քրեական գործերով արձանագրվել է պետությանը պատճառված 217.606.157 դրամի վնաս, որից 11.646.100 դրամը մինչդատական վարույթի ընթացքում վերականգնվել է:

2011թ. պետական շահերի պաշտպանության 25 (2010թ.՝ 31) հայց է հարուցվել դատարան՝ ընդհանուր առմամբ 11.148.200 (2010թ.՝ 88.048.000) դրամ բռնագանձելու պահանջի մասին, ևս 1 հայց 49.788.400 դրամ հայցային գնով փոխանցվել է նախորդ տարվանից:

2011թ. դատարանների կողմից քննության է առնվել 26 (2010թ.՝ 29) հայց՝ 60.936.600 (2010թ.՝ 319.693.500) դրամ բռնագանձելու պահանջի մասին, որոնք ամբողջությամբ բավարարվել են: Դատարանների կողմից բավարարված հայցերով փաստացի վերականգնվել է դրամ, որից 316.655.600 դրամը՝ նախորդ տարիներին արձանագրված:

2011թ. պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված 4 ուսումնասիրությունների արդյունքներն ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչություն՝ առաջարկելով հայցեր հարուցել դատարան՝ ընդհանուր առմամբ 300.529.710 դրամ բռնագանձելու պահանջով:

Կազմակերպական-վերահսկողական գործունեության ընթացքում 2011թ. ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ընդունվել է 61 (2010թ.՝ 28) հրաման, կազմվել է ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների 3 (2010թ.՝ 7) կարգադրություն և 12 (2010թ.՝ 18) հանձնարարական:

Հրավիրվել է ՀՀ դատախազության 8 (2010թ.՝ 8) կոլեգիայի նիստ, որոնց առնչությամբ կատարվել են համապատասխան կազմակերպական աշխատանքներ՝ հավաքվել են ամփոփիչ տեղեկանքները, նյութերը, որոշումների նախագծերը, դրանք բազմացվել ու տրամադրվել են կոլեգիայի մասնակիցներին, կազմվել են կոլեգիայի արձանագրություններն ու որոշումները, որոնցից յուրաքանչյուրը կրկնակի լրամշակվել է, դրվել շրջանառության մեջ, կազմվել են արձանագրություն ու որոշման նախագիծ և ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազի հաստատմանը:

ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումները, որպես դատախազության կողմից մշակվող և իրականացվող քրեական պետական քաղաքականության առանձնահատուկ իրավակազմակերպական դրսևորումներ, ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան հրամաններով կենսագործվել են տարածքային դատախազություններում և կառուցվածքային ստորաբաժանումներում, իսկ դրանց միջոցով նախաքննության և հետաքննության մարմիններում: ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումները վերաբերել են այնպիսի հիմնարար հարցերի, ինչպիսիք են՝ խուլիգանության դեպքերի վերաբերյալ նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության նկատմամբ իրականացված դատավարական ղեկավարման, դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակին, դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու գործընթացում օրենսդրության պահանջների պահպանման վիճակին, 2010թ. աշնանային և 2011թ. գարնանային զորակոչի արդյունքների, ավազակային հարձակման եղանակով կատարված հափշտակությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման և քրեական գործերի նախաքննության ու մեղադրանքի պաշտպանության վիճակին, մարդու առևտրի (թրաֆիքինգի) փաստով հարուցված քրեական գործերի նախնական քննության նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության վիճակին և մեղադրանքի պաշտպանության պրակտիկային, ՀՀ ՔՈՒ-ում արձանագրված՝ կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման, նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրինականության և մեղադրանքի պաշտպանության բնագավառներում իրականացված դատախազական գործունեության արդյունքներին և այլն:

Դատախազների կողմից ծառայողական պարտականությունների կատարման և վարքագծի կանոնների պահպանման, ինչպես նաև օրենքի պահանջների կատարման վիճակը պարզելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հանձնարարությամբ իրականացվել է 11 կարգապահական վարույթ՝ 24 դատախազի նկատմամբ:

Ավարտված կարգապահական վարույթների արդյունքներով՝

- 8 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն»,
- 3 դատախազի նկատմամբ՝ «դիտողություն»,
- 3 դատախազի նկատմամբ, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի եզրակացության համաձայն, նշանակվել է «խիստ նկատողություն» տեսակի կարգապահական տույժը:

8 դատախազի նկատմամբ ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ անցկացված օպերատիվ խորհրդակցություններում: Արդյունքում՝ դատախազները խիստ նախազգուշացվել են, և միաժամանակ նրանց ուշադրությունը հրավիրվել է արձանագրված թերությունների, բացթողումների ու խախտումների վրա՝ այսուհետ դրանք բացառելու համար:

2011թ. վերահսկողության է վերցվել ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից հսկողության վերցված 2161 (2010թ.՝ 1714) դիմում-բողոքով տրված հանձնարարական: Այդ բնագավառում միայն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից ստացվել է 123 (2010թ.՝ 62) դիմում, որոնց տրվել են պատասխաններ:

Կատարված ամփոփումները ցույց են տվել, որ ՀՀ դատախազության համակարգում կատարված դատախազական աշխատանքի, դատախազական ներգործության միջոցների կիրառման և դատախազական ակտերի կայացման վիճակը դեռևս պետք է բարելավել, չնայած այդ մասով արձանագրվել է դատախազական ցուցանիշների որոշակի աճ: Այս առումով, նախորդ համապատասխան ժամանակաշրջանների նման ամփոփվել են նյութերով քրեական գործի հարուցումը վերացնելու, քրեական գործ հարուցելու, քրեական գործերի վարույթները կարճելու, կասեցնելու, քննիչին վարույթից հեռացնելու մասին որոշումները վերացնելու, նյութերով և քրեական գործերով տրված գրավոր ցուցումների, դատախազների կողմից պատկան մարմիններին ու կազմակերպություններին ուղարկած միջնորդագրերի, հաղորդումների, միջնորդությունների (այդ թվում նաև հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձին վարույթից հեռացնելու մասին և այլն) և քննիչների ամսական ծանրաբեռնվածության ցուցանիշները, որոնց արդյունքներով կազմվել են համապատասխան վերլուծական նյութեր, ինչպես նաև կազմվել է կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դատախազի ամսական միջին ծանրաբեռնվածությունը և դրա արդյունքներով արվել են համապատասխան հետևություններ (հաստիքների վերադասավորություններ՝ ուժերի հավասարաչափ բաշխման նպատակով և այլն):

Ընդունելի համարելով հետաքննության և նախաքննության մարմինների հետ ամենօրյա աշխատանքներ տանելու, նրանց մշտապես աշխատանքային կարգով ուղղություններ տալու և նրանց գործունեությունը մշտապես հսկողության տակ պահելու վերաբերյալ դատախազների ներկայացրած պատճառաբանությունները՝ մշտապես պետք է նկատի ունենալ, որ դատախազի աշխատանքի արդյունքների դրսևորման օրենքով սահմանված միակ կառուցակարգը հենց դատախազական ներգործության միջոցների կիրառման և դատախազական ակտերի կայացման գործընթացներն են, որի ուղղությամբ դեռևս անելիքներ կան:

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների նման շարունակվում է ուշադրության կենտրոնում մնալ դատախազների կողմից վերլուծական աշխատանքի վարման և ՀՀ դատախազության կոլեգիայի առանձին որոշումներով պայմանավորված ամփոփումների կատարման վիճակը, որի կապակցությամբ արձանագրված թերություններն ու բացթողումները մշտապես քննարկվում են տարբեր մակարդակներով և արվում համապատասխան հետևություններ:

ՀՀ դատախազությունում ավարտվել են ՀՀ Նախագահի 21.04.2009թ. N ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված 2-րդ հավելվածի (Դատահիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների ցանկի)՝ ՀՀ դատախազությանը վերաբերող միջոցառումները: Կազմակերպվել և նույն ծրագրի 2012-2016թթ. ժամանակաշրջանի՝ ՀՀ դատախազության մասով իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ առաջարկներում, ի թիվս այլ միջոցառումների, ընդգրկվել է նաև ՀՀ դատախազության համակարգում վիճակագրության և արխիվի վարման էլեկտրոնային (համակարգչային) համակարգը, ինչը զգալի կպարզեցնի և կհեշտացնի վիճակագրական տվյալների մուտքագրման, լրացման, ներկայացման, վերլուծման և ամփոփման աշխատանքները: Այդ նպատակով, միջոցառումների իրականացման շրջանակներում, կազմվել և ՀՀ գլխավոր դատախազի կողմից հաստատվել են ՀՀ դատախազության համակարգում վիճակագրության վարման էլեկտրոնային (համակարգչային) կառավարման համակարգի (ծրագրի) կազմման ու ներդրման տեխնիկական բնութագիրն ու վիճակագրության չափորոշիչները, որոնցով սահմանվել են այդ ծրագրի կազմման և ներդրման անհրաժեշտությունը, նպատակն ու հիմքերը, ծրագրին ներկայացվող հիմնական պահանջները (վիճակագրության չափորոշիչները) և խնդիրները, ծրագրի և համակարգչային ցանցի նկարագրությունը (այդ թվում՝ ներկա իրավիճակն ու առաջարկվող ծրագրի նկարագրությունը), ծրագրի կազմման ու ներդրման փուլերը և այլն:

Այս միջոցառման իրականացման հետ կապված՝ ՀՀ գլխավոր դատախազի մի շարք գրություններով ՀՀ արդարադատության նախարարին առաջարկվել է ցանկով նախատեսված՝ ՀՀ դատախազության համակարգում վիճակագրության և արխիվի վարման էլեկտրոնային (համակարգչային) կառավարման առանձին համակարգերի (ծրագրերի) կազմման ու ներդրման գործընթացները միավորել և որպես մեկ միասնական միջոցառում ներառել Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող հաջորդ փուլի՝ «Դատական և իրավական բարեփոխումների 2012-2016թթ.

ռազմավարական գործողությունների» ծրագրում, որի անհրաժեշտության մասին հիմնավորումը ներկայացվել է հիշյալ գրություններում:

Վերը նշված գործընթացի շրջանակներում դատախազությունն ուսումնասիրել է միջազգային փորձը, ինչպես նաև ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի օժանդակությամբ, կարիքների գնահատման ոլորտում համագործակցել Գերմանիայից հրավիրված քրեական հաշվառման և վիճակագրության ոլորտի և Կանադայից հրավիրված քրեական արդարադատության ոլորտի փորձագետների հետ, որոնք անցկացրել են ՀՀ դատախազության համակարգում վերջին տարիներին իրականացրած իրավակազմակերպական և կառուցվածքային բարեփոխումների դիտարկումն ու գնահատումը, որոնց եզրակացություններից բխող միջոցառումների իրականացումը շարունակվում է:

Բացի այդ, ՀՀ-ում Եվրոպական Միության խորհրդատվական խմբի հետ սերտ համագործակցության շրջանակներում դատախազությունն աշխատել է օտարերկրյա փորձագետների հետ, որոնց մասնակցությամբ անցկացվել են պետական այլ մարմինների ներկայացուցիչների հետ համատեղ սեմինար քննարկումներ՝ նվիրված ՀՀ-ում կազմակերպված հանցագործության դեմ պայքարի, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության և դրանց հետ կապված դատաիրավական հարցերին:

ՀՀ դատախազությունը, համագործակցելով ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ դատական դեպարտամենտի համապատասխան ծառայությունների հետ, շարունակել է ապահովել ՀՀ Նախագահի 21.04.2009թ. ՆԿ 59-Ն կարգադրությամբ հաստատված՝ «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների» ցանկում նշված, 2009-2011թթ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա մյուս միջոցառումների իրականացումը և արդյունքների վերաբերյալ համապատասխան հաղորդումներ է ուղարկել ՀՀ արդարադատության նախարարին: Համագործակցելով ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համապատասխան ծառայությունների հետ, շարունակել է ապահովել ՀՀ Կառավարության 27.03.2008թ. N 1039-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի միջոցառումների» ցանկի, 2009-2010թթ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա համապատասխան միջոցառումների իրականացումը և արդյունքների վերաբերյալ համապատասխան հաղորդում է ուղարկել ՀՀ ԿԱ ոստիկանություն: Համագործակցելով իրավասու պետական մարմինների հետ՝ շարունակաբար իրականացվել են ՀՀ Կառավարության 08.10.2009թ. N 1272-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների ծրագրի միջոցառումների» ցանկում նշված, 2009-2011թթ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա համապատասխան միջոցառումները և այլն:

ՀՀ և ԼՂՀ դատախազությունների միջև 09.12.2008թ. կնքված համագործակցության և փոխօգնության մասին համաձայնագիր-հուշագրով ամրագրված գործընթացների՝ գործնականում իրականացման շրջանակներում, շարունակվել է համագործակցությունը երկու դատախազությունների միջև:

ՀՀ դատախազության և 100-ից ավելի հասարակակական կազմակերպությունների համագործակցության արդյունքում ՀՀ դատախազության ու հասարակական կազմակերպությունների միավորման համակարգող խորհրդի միջև 10.06.2010թ. ստորագրված համագործակցության վերաբերյալ հուշագրի շրջանակներում ապահովվել է արդյունավետ և նպատակային համագործակցությունը հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների հետ:

ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի (ԳԴՀԽ) գործադիր կոմիտեից ստացված՝ վերջինիս կողմից հաստատված ձևին համապատասխան՝ կազմվել և ԳԴՀԽ է ուղարկվել ՀՀ-ում **2010 թվականի ընթացքում հանցավորության վիճակի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվական 4 (2010թ.՝ 3) նյութ:**

<u>Միջազգային-իրավական օգնության</u> բնագավառում 2011թ. աշխատանք է կատարվել քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման, ներառյալ՝ քրեական հետապնդման կամ դատավճռի ի կատար ածման նպատակով հետախուզվող անձանց հանձնման, երկկողմ,

ինչպես նաև միջազգային կազմակերպությունների շրջանակում համագործակցության և այլ ոլորտներում:

2011թ. ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ է ուղարկվել քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու 46 (2010թ.՝ 22), իսկ այլ օտարերկրյա պետություններ 51 (2010թ.՝ 27) միջնորդություն, ընդամենը՝ 97 (2010թ.՝ 49) միջնորդություն:

2011թ. քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 45 (2010թ.՝ 35) միջնորդություն, իսկ այլ օտարերկրյա պետություններից 59 (2010թ.՝ 41) միջնորդություն, ընդհանուր առմամբ ստացվել է 104 (2010թ.՝ 76) միջնորդություն:

Հանցագործություն կատարած անձանց հանձնման և դատապարտյալների փոխանցման մասին հարցումների նախապատրաստման և ուղարկման կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքների ոլորտում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում քննվող քրեական գործերով հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ 82 (2010թ.՝ 95) միջնորդության նախապատրաստումն ու ուղարկումը, որոնցից 71-ը ուղարկվել է ԱՊՀ մասնակից-պետությունների, իսկ 11-ը այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը: ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող անձանց այլ պետությունների տարածքում հայտնաբերման մասին ստացված հեռագրերի հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթները հանգամանալից ուսումնասիրվել են, պահանջվել են դրանց լրամշակված տարբերակները, իսկ անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ: Այս գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում բացառվել են հանձնման միջնորդությունների անհիմն մերժումները: Ներկայացված հանձնման 82 միջնորդությունից 35-ը բավարարվել է, 15-ը մերժվել է, 32-ը գտնվում է քննարկման փուլում: Նույն ժամանակահատվածում այլ պետությունների իրավասու մարմինների կողմից քննարկվել և բավարարվել է նաև նախկինում ներկայացված ևս 14 միջնորդություն:

2011թ. օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է նրանց իրավապահ մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված անձանց վերաբերյալ 30 (2010թ.՝ 27) միջնորդություն, որոնցից 23-ը ԱՊՀ մասնակից-պետությունների, իսկ 7-ը օտարերկրյա պետության իրավասու մարմիններից: Ստացված 30 միջնորդությունից 6-ը բավարարվել է, հիմնականում քաղաքացիության հիմքով մերժվել է 10 միջնորդություն, 7-ը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 7-ը գտնվում է քննարկման փուլում:

2011թ. հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 109 (2010թ.՝ 165) անձի վերաբերյալ: Հայտնաբերված հետախուզվողների քաղաքացիության պարզման նպատակով հարցումներ են կատարվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, անմիջապես տեղեկացվել է հետախուզման նախաձեռնողը, պահանջվել են հանձնման փաստաթղթեր, իսկ ՀՀ քաղաքացի հանդիսանալու պարագայում ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնելու նպատակով պահանջվել են հարուցված քրեական գործերը:

Քրեական հետապնդում իրականացնելու հանձնարարությամբ այլ պետությունների իրավապահ մարմիններին ուղարկվել է 24 (2010թ.՝ 23) քրեական գործ և նյութեր, որոնցից 21-ն ուղարկվել է ԱՊՀ իրավասու մարմիններին, իսկ 3-ը այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդության հիման վրա ստացվել են 19 (2010թ.՝ 17) քրեական գործ և նախապատրաստված նյութեր, որոնցից 13-ը՝ ԱՊՀ, իսկ 6-ը՝ այլ օտարերկրյա պետության իրավասու մարմիններից:

2011թ. կազմակերպվել է այլ պետությունների դատախազությունների, իրավապահ այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ու պատվիրակություններ շուրջ 60 հանդիպում ՀՀ գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի տեղակալների հետ:

2011թ. ՀՀ գլխավոր դատախազի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի հերթական նիստին:

2011թ. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել իր համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարի մշտական ներկայացուցչի գրասենյակի, ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի, ԵԱՀԿ-ի, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի, ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների Միջազգային Ասոցիացիայի, Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

<u>ՀՀ դատախազությունն իրավական ապահովման ոլորտում</u> իրականացրել է տարբեր իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված միջոցառումների մշակման աշխատանքներ:

2011թ. մշակվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, որոնց նպատակն է կատարելագործելու ՀՀ օրենսդրությունը և բարելավելու ՀՀ դատախազության գործունեությունը: Այդ նպատակով մշակվել կամ վերամշակվել է 18 (2010թ.՝ 27) օրենսդրական ակտի նախագիծ: Այդ թվում՝ նախապատրաստվել են «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր:

ՀՀ Նախագահի 2009թ. ապրիլի 21-ի «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N ՆԿ-59-Ն կարգադրության հավելված 2-ով հաստատված միջոցառումների ցանկի 5.1 կետի պահանջները կատարելու նպատակով, 2010 թվականի ընթացքում մշակվել է ««Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 3 նախագիծ: Դրանք այնուհետև միավորվել և դրվել են ներքին շրջանառության մեջ՝ կարծիքներ ստանալու համար:

Մշակվել է ՀՀ Կառավարության որոշման 5 նախագիծ:

2011թ. ստացվել են 87 (2010թ.՝ 74) օրենքի, Կառավարության որոշման 17 (2010թ.՝ 15) նախագծեր: Օրենքների նախագծերի թիվն աճել է 13-ով, իսկ Կառավարության որոշման նախագծերի թիվը՝ 2-ով, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան կարծիքներ:

<u>Անձնակազմի հետ տարվող աշխատանքների ոլորտում ՀՀ դատախազությունը</u> 2011թ. դատախազության համակարգի աշխատակիցների վերաբերյալ նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի ու ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների ստորագրմանն է ներկայացրել 1141 (2010թ.՝ 708) հրամանի նախագիծ, որոնցից 493-ը (2010թ.՝ 422)՝ արձակուրդի, 356-ը (2010թ.՝ 99)՝ գործուղման վերաբերյալ:

2012թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ դատախազությունն ունի 337 հաստիքային միավոր: 2011թ. աշխատանքի է ընդունվել 21 (2010թ.՝ 15) աշխատակից: 2012թ. հունվարի 1-ի դրությամբ թափուր է եղել 10 (2010թ.՝ 4) հաստիք: ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով 58 (2010թ.՝ 42) աշխատակից տեղափոխվել է տարբեր պաշտոնների: 27 (2010թ.՝ 11) աշխատակից ազատվել է աշխատանքից:

2011թ. անցկացվել է ՀՀ դատախազության աշխատակիցների որակավորման հանձնաժողովի 23 (2010թ.՝ 17) նիստ: Լսվել է 112 (2010թ.՝ 58) աշխատակցի գնահատագիր, որոնցից 98-ի (2010թ.՝ 48) նկատմամբ կայացվել է զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու վերաբերյալ որոշում, 9-ի (2010թ.՝ 3) նկատմամբ՝ դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, 1-ի (2010թ.՝ 0) նկատմամբ՝ չի համապատասխանում զբաղեցրած

պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին, իսկ 4 (2010թ.՝ 7) դատախազի նկատմամբ՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով որոշում:

2011թ. կազմվել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանն են ներկայացվել խրախուսման վերաբերյալ մի շարք հրամանների նախագծեր, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդություններ՝ ՀՀ Նախագահին, Վարչապետին և այլ գերատեսչական կառույցների ղեկավարներին՝ մի շարք աշխատակիցների խրախուսելու վերաբերյալ:

2011թ. հերթական դասային աստիճան է շնորհվել 70 (2010թ.՝ 48) աշխատակցի:

2011թ. «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ում վերապատրաստման դասընթացին մասնակցել է 269 (2010թ.՝ 265) դատախազ, որոնցից 4-ը (2010թ.՝ 2), համաձայն կարգի 75-րդ կետի, պետք է անցնի կրկնակի վերապատրաստում:

Դատախազության համակարգի ղեկավար կազմի տարեկան վերապատրաստման շրջանակներում վերապատրաստվել է 46 (2010թ.՝ 46) դատախազ, իսկ սեմինար-քննարկումներին չներկայանալու պատճառով վերապատրաստումը չանցած է համարվել 4 (2010թ.՝ 6) մասնակից:

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի եզրակացությամբ և ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ 2011թ. լրացուցիչ վերապատրաստման ենթակա դատախազներից լրացուցիչ վերապատրաստումն անցել է 7 (2010թ.՝ 2) դատախազ:

Կազմակերպվել է տարբեր բուհերի 56 (2010թ.՝ 62) ուսանողի արտադրական պրակտիկայի անցկացումը ՀՀ դատախազության ստորաբաժանումներում:

2011թ. աշխատանքներ են կատարվել <u>ՀՀ դատախազությունում ստացված դիմումներն ու բողոքները</u> սահմանված ժամկետում քննարկելու, դիմումների քննարկման արդյունավետությունը բարձրացնելու, տեղ գտած թերություններն ու խախտումները վերացնելու, ինչպես նաև քաղաքացիների ընդունելությունը բարելավելու ուղղությամբ:

2011թ. ՀՀ դատախազությունում ստացվել է 11016 (2010թ.՝ 10288) դիմում-բողոք, որոնցից 2855-ը (2010թ.՝ 1967) եղել է կրկնակի, 504-ը (2010թ.՝ 530) բավարարվել է, 781-ը (2010թ.՝ 711) մերժվել է, 3689-ը (2010թ.՝ 3478) ուղարկվել է այլ մարմին, 23 անանուն դիմում թողնվել է առանց քննարկման, 161-ը (2010թ.՝ 141) մնացել է անավարտ:

ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է 2390 (2010թ.՝ 2575) քաղաքացու ընդունելություն, որոնցից ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների մոտ ընդունելության է ներկայացել 119 (2010թ.՝ 178) քաղաքացի:

Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 01.08.2007թ. N 53 հրամանի 13.07.2004թ. N 277 հրամանում փոփոխություն կատարելու վերաբերյալ պահանջի՝ ընթացք է տրվել նաև բռնադատվածների վերաբերյալ դիմումներին, որի կապակցությամբ ընդհանուր հաշվով 36 (2010թ.՝ 67) քաղաքացուց ստացվել է 41 (2010թ.՝ 75) դիմում, որոնցից 5-ը (2010թ.՝ 8) կրկնակի: 17-ի (2010թ.՝ 23) խնդրանքը բավարարվել է, նրանց տրվել է բռնադատված կամ բռնադատվածի առաջին հերթի ժառանգ լինելու մասին տեղեկանք, իսկ 3 (2010թ.՝ 30) դիմումով խնդրանքը մերժվել է «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ, 16-ով տրվել է պարզաբանում, 3-ը թողնվել է անավարտ:

Ընդունելության ներկայացած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պատշաճ պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են ընդունելություններ դատավարական հսկողություն իրականացնող դատախազների և նրանց վերադասների մոտ, դիմումներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

2011թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության մասով <u>ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներն</u> իրականացրել են ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթում քննված 193 (2010թ.՝ 214) քրեական գործ, քրեական գործի նկատմամբ դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն, որոնցից 31-ը փոխանցվել է նախորդ տարվանից, իսկ վարույթ է ընդունվել 162-ը:

2011թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ընթացք է տրվել 216 (2010թ.՝ 166) նյութի, որոնցից 12-ը փոխանցվել է նախորդից, 204-ը նախապատրաստվել է հաշվետու ժամանակաընթացքում: 216 նյութից 34-ով (2010թ.՝ 35) հարուցվել են քրեական գործեր, 123-ով (2010թ.՝ 92) քրեական գործի հարուցումը մերժվել է, 17-ն (2010թ.՝ 14) ուղարկվել է այլ մարմին, 26-ը (2010թ.՝ 12) կցվել է քրեական գործերին, իսկ 16-ը ընթացքում է: Քրեական գործի հարուցումը մերժված 123 նյութից 81-ով հարուցումը մերժվել է արդարացման, իսկ 42-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

2011թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթում քննվել է 193 քրեական գործ, որոնցից 31-ը փոխանցվել է նախորդ տարվանից, իսկ վարույթ է ընդունվել 162-ը:

Վարույթ ընդունված քրեական գործերից ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է 69-ը (որոնցից 20-ը՝ անջատված նյութերով), այլ մարմիններից ստացվել է 88-ը (այդ թվում՝ ՀՀ ոստիկանության քննչական մարմիններից՝ 68-ը, ՀՀ ԿԱ ԱԱԾ-ից՝ 4-ը, ՀՀ գլխավոր դատախազությունից՝ 10-ը, ՀՀ ՊՆ-ից՝ 3-ը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից՝ 2-ը, ԼՂՀ իրավապահ մարմիններից՝ 1-ը), վերսկսվել է նախկինում կասեցված քրեական գործերից 5-ը:

Վարույթում քննված 193 քրեական գործից 44-ը եղել է պետական ծառայության, 29-ը՝ կյանքի ու առողջության, 22-ը՝ սեփականության, 20-ը՝ հասարակական կարգի և բարոյականության, 20-ը՝ տնտեսական գործունեության, 19-ը՝ կառավարման կարգի, 18-ը՝ հասարակական անվտանգության, 17-ը՝ բնակչության առողջության, 2-ը՝ անձի ազատության, պատվի և արժանապատվության, 1-ը՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների, 1-ը՝ արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ:

Վարույթում քննված 193 քրեական գործից ավարտվել է 110-ը, որոնցից 69-ը ուղարկվել է դատարան, 41-ը կարճվել է, 4-ը կասեցվել է, 44-ը ուղարկվել է այլ մարմին, 14-ը միացվել, 21-ը մնացել է անավարտ:

Վարույթում քննված քրեական գործերից 69-ը՝ 131 անձի (2010թ.՝ 89 գործ, 165 անձ) նկատմամբ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Կարճվել է 41 (2010թ.՝ 25) քրեական գործ, կասեցվել է 4 քրեական գործի վարույթ, 44-ը ուղարկվել այլ մարմին, 14-ը միացվել, 21-ը մնացել է անավարտ:

Ավարտված քրեական գործերով պատճառված 4.786.429.882 (2010թ.՝ 62.893.437) դրամ վնասից նախաքննության ընթացքում վերականգնվել է 908.711.882 (2010թ.՝ 33.460.000) դրամը կամ 22,7 %-ը (2010թ.՝ 53,2%):

2011թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված քրեական գործերից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 69-ը՝ 131 անձի (2010թ.՝ 89գործ, 165 անձ) նկատմամբ:

Դատի տրված 111 անձից դատապարտվել է 98-ը, 8-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, արդարացվել է 5-ը: Դատապարտված 98 անձից 73-ի կամ 74,5%-ի նկատմամբ նշանակվել է ազատազրկում, 16-ի կամ 16,3%-ի նկատմամբ՝ տուգանք, իսկ ազատազրկման դատապարտված 9 անձի կամ 9,2%-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան: Դատապարտված 42 անձ համաներման ակտի հիման վրա ազատվել է պատիժը կրելուց:

2011թ. դատարաններում ավարտված 111 անձի վերաբերյալ 69 քրեական գործից դատական քննության արագացված կարգ կիրառվել է 24 գործով՝ 35 անձի վերաբերյալ:

Դատի տրված 33 պաշտոնատար անձից, ըստ բնագավառների և զբաղեցրած պաշտոնների, եղել են՝ ոստիկանության աշխատակիցներ՝ 16-ը (այդ թվում՝ տեսուչներ՝ 5-ը, բաժանմունքի պետեր՝ 4-ը, բաժնի պետի տեղակալներ՝ 2-ը, ՃՈ պետ, ՔՀԲ օպերլիազոր, գումարտակի հրամանատար, ավագ և ոստիկան՝ 1-ական), ՊԵԿ-ի աշխատակիցներ՝ 4-ը (այդ թվում՝ մաքսային տեսուչներ՝ 2, գանձումների բաժնի տեսուչ և օպերլիազոր՝ 1-ական), ՏԻՄ-ի (մարզպետարանի) աշխատակիցներ՝ 4-ը (այդ թվում՝ մարզպետ, մարզպետարանի վարչության պետ, բաժնի պետ և համայնքի ղեկավար՝ 1-ական), ՔԿՀ աշխատակիցներ՝ 2-ը (այդ թվում՝ ՔԿՀ առաջատար և ավագ մասնագետներ՝ 1-ական), ԱԻՆ աշխատակիցներ՝ 2-ը (այդ թվում՝ մարզային փրկարարական վարչության պետ և ջոկատի հրամանատար՝ 1-ական), ԱԱԾ-ի աշխատակից՝ 1-ը (ավագ օպերլիազոր) և «Հայինկասացիա» ՓԲԸ-ի աշխատակիցներ՝ 4-ը (այդ թվում՝ գլխավոր հաշվապահ, տեղակալ, հաշվապահ և առաքիչ-ինկասատոր՝ 1-ական):

ՀՀ դատախազությունը որոշակի աշխատանք է կատարել **հրապարակայնության և հանրային իրազեկման ապահովման ոլորտում** և կարևորելով այդ ոլորտում քաղաքացու՝ տեղեկություն ստանալու իրավունքը և 2011թ.-ին շարունակել է հետևողական քայլեր ձեռնարկել՝ դատախազության աշխատանքների թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ պարբերաբար տեղեկություն տրամադրելով դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման վերաբերյալ: Առանձնակի ուշադրություն է դարձվել նաև քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը պահպանելով մարդու իրավունքները: Այս առումով առանձնակի նշանակություն է տրվել և տրվում դատախազության պաշտոնական համացանցային էջի արդյունավետ գործարկմանը, ինչը հավասար պայմաններ է ստեղծում բոլոր շահագրգիռ անձանց համար դատախազության աշխատանքների վերաբերյալ տեղեկություն ստանալու հարցում:

ՀՀ դատախազությունն այդ ոլորտում համագործակցել է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, մասնակցել է 17 սեմինար-քննարկումների, այդ թվում՝ հակակոռուպցիոն միջազգային օրվան նվիրված սեմինարին, եղել են հրավեր-մասնակցություններ, այդ թվում՝ «Հայկական հուշարձանների պահպանման ծրագիր» ՀԿ-ի կողմից՝ էլեկտրոնային կայքէջի շնորհանդեսին՝ «Վիլա-Այգեձորում», «Ֆեմիդա» ՀԿ-ից՝ վերջինիս կողմից ներկայացվող հեռուստածրագրում դատախազության ներկայացուցիչների մասնակցությամբ, «Գործընկերություն հանուն բաց հասարակության» ՀԿ-ից՝ ԵՔՀ ծրագրի 2011թ.-ի իրականացման՝ քաղաքացիական հասարակության զեկույցի ներկայացմանը, ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան կողմից՝ կանանց արիության համար տրվող մրցանակաբաշխությանը, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակից՝ «Նանե» ամենամյա մրցանակաբաշխությանը, ՀՀ սփյուռքի նախարարությունից՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառմանը, «Հետազոտական ռեսուրսներ կովկասյան կենտրոններ-Հայաստան» կազմակերպությունից՝ կոռուպցիայի վերաբերյալ զեկույցի շնորհանդեսին, «Խոսքի ազատության պաշտպանության» կոմիտեից՝ «Տեղեկատվության ազատություն և պետական մարմինների գործունեության թափանցիկություն» թեմայով սեմինարին, «Շողակաթ» հեռուստատեսությունից՝ վերջինիս կողմից ներկայացվող հեռուստածրագրում դատախազության ներկայացուցիչների մասնակցությամբ, ԱՄՆ-ի դեսպանատնից՝ ԱՄՆ-ի անկախության տարեդարձի հետ կապված, ինֆորմացիոն ազատության կենտրոնից՝ GiveMelefo.am կայքի շնորհանդեսին, Ինֆորմացիոն ազատության կենտրոնից՝ «Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» մրցանակաբաշխությանը, «Բաց հասարակություն» հիմնադրամի կողմից կազմակերպված «Ինչպիսին է ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ապագան» խորագրով համաժողովին և «Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի շրջանառության կանոնակարգման» խնդիրների վերաբերյալ սեմինարին, USADI-ի կողմից կազմակերպված «Կլոր սեղան»-ին՝ «Ընտանեկան բռնություններ» թեմայով, «Հանրային ցանցի»-ի գործունեության և «Քաունթերփարթ Ինթերնեյշնլ» կազմակերպության հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ իրականացված քարտուղարության կարողությունների հզորացման ծրագրի շրջանակներում ստեղծված կայքէջի շնորհանդեսին, ԵՄ խորհրդատվական խմբի կողմից ՀՀ գլխավոր դատախազության աշխատակիցների համար կազմակերպված մտավոր սեփականության իրավունքների (ՄՍԻ) մասին սիմպոզիումին, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի» և «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» հիմնադրամի կողմից կազմակերպված Ամալյա Կոստանյանի անվան մրցանակի հանձնման արարողությանը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից նախաձեռնված և իրականացված դատական գործերի ձեռնարկի շնորհանդեսին:

Հանրային իրազեկման ոլորտում նույնպես կատարվել են մեծածավալ աշխատանքներ, մասնավորապես՝ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ և հեռուստաընկերությունների հետ համագործակցության շրջանակներում պատրաստվել և եթեր են հեռարձակվել, ինչպես նաև ՀՀ դատախազության պաշտոնական կայքում տեղադրվել են ՀՀ դատախազության գործունեությանն առնչվող 53 տեսահոլովակ, տեսանյութ և ֆիլմեր: ՀՀ դատախազության պաշտոնական կայքում հրապարակվել է 1481 հաղորդագրություն կամ մամուլի հրապարակումների հերքում: Նշված աշխատանքներով ներկայացվել են առանձին

հանցատեսակների բացահայտման ուղղությամբ կատարված աշխատանքներն ու պատժողական քաղաքականությունը: Հեռուստահաղորդումները վերաբերել են, մասնավորապես, երկրի սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված, կոռուպցիոն, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման, մարդկանց շահագործման, անձի կյանքի և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկված աշխատանքներին:

Դատախազության աշխատանքների հրապարակայնությունն ապահովելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը դրական գնահատականի են արժանացել նաև քաղաքացիական հասարակության կողմից: Միայն 2011թ.-ին դատախազությունը ստացել է 2 մրցանակ: Մասնավորապես, «Խոսքի ազատության կոմիտե» հասարակական կազմակերպությունը 2011թ. հունվարին հրապարակել է 2010թ. իրականացրած դիտարկման արդյունքները, ըստ որի՝ դատախազության համացանցային էջը ճանաչվել է լավագույնը և տեղեկատվության մատչելիության առումով ամենաթափանցիկը, իսկ 2011թ. սեպտեմբերին տեղեկատվության ազատության միջազգային օրվա կապակցությամբ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից ՀՀ գլխավոր դատախազությունն արժանացավ շնորհակալագրի՝ Հայաստանում տեղեկատվության ազատությունը և հրապարակայնությունը զարգացնելու համար:

ՀՀ գլխավոր դատախազությունը 2012թ.-ին ևս շարունակելու է հետևողական քայլեր ձեռնարկել դատախազության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ՝ հաշվի առնելով քրեական դատավարության վերաբերյալ տեղեկության տրամադրման առանձնահատկությունները և քաղաքացու տեղեկություն ստանալու իրավունքի հնարավոր բախումը քաղաքացու մյուս հիմնարար իրավունքներին, ինչպիսիք են՝ անմեղության կանխավարկածը, անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, պատվի ու արժանապատվության նկատմամբ հարգանքը, ինչպես նաև՝ նախաքննության գաղտնիությունը՝ փորձելով պահպանել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներին ու սկզբունքները:

«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ դպրոց) իրականացրել է 2011թ. վերապատրաստման ցուցակում ընդգրկված 315 (2010թ.՝ 319) դատախազի տարեկան վերապատրաստում՝ 17 խմբով: Յուրաքանչյուր խմբում ընդգրկված է եղել 17-25 դատախազ: Դատախազության ղեկավար կազմի վերապատրաստումը իրականացվել է դրսեկության եղանակով: Ղեկավար կազմում ընդգրկված 50 դատախազից վերապատրաստում չի անցել 4-ը՝ ուսումնառությանը չներկայանալու պատճառով: Տարեկան վերապատրաստման ենթակա 265 դատախազից 4-ը անցել է կրկնակի վերապատրաստում:

2011թ. դպրոցը իրականացրել է 2011թ. վերապատրաստման ցուցակում ընդգրկված ՀՀ դատախազության աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստում, որն անցկացվել է 6 խմբով:

Կրթական ծրագրերով նախատեսված ուսումնական գործընթացներն իրականացվել են դասախոսությունների, գործնական պարապմունքների, դասախաղերի, դատախաղերի, սեմինարների, խնդիրների հիման վրա քննարկումների, բանավեճերի, ինչպես նաև Եվրոպական դատարանի վճիռների, Վճռաբեկ դատարանի որոշումների քննարկումների միջոցով: Դասընթացներն անցկացվել են ինչպես դպրոցի աշխատակիցների, այնպես էլ ժամավճարային կարգով վերապատրաստման դասընթացներին որպես դասախոսներ ներգրավված տարբեր հաստատություններում դասավանդող իրավաբան-մասնագետների և դատախազության փորձառու աշխատակիցների կողմից:

Դպրոցն ապահովել է ժամանակակից գիտատեխնիկական և դասավանդման մեթոդների կիրառմամբ կրթական ծրագրերի իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցը պայմանագրային հիմունքներով իրականացրել է այլ կրթական գործունեություն, մասնավորապես, ի կատարումն դպրոցի և ԼՂՀ դատախազության միջև 22.04.2011թ. կնքված վերապատրաստման ծառայություններ մատուցելու մասին պայմանագրի, ըստ ԼՂՀ գլխավոր դատախազի 16.01.2010թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազությունում մասնագիտական պատրաստում և վերապատրաստում անցնելու մասին» N 1 հրամանով հաստատված կարգի՝ անցկացվել է ԼՂՀ դատախազների և

քննիչների տարեկան վերապատրաստում, ԼՂՀ դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված հավակնորդների մասնագիտական պատրաստում:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցը ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչության և ՀՀ գլխավոր դատախազության թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով բաժնի հետ համատեղ հրատարակել է «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը ՀՀ-ում 2009-2010թթ.» տեղեկատվական նամակ, ձեռնամուխ է եղել «Մարդկանց թրաֆիքինգ. կանխարգելում, քրեական հետապնդում, պաշտպանություն» խորագրով գիտամեթոդական ձեռնարկի հրատարակմանը, որը Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային ուսուցման մեթոդի ստեղծման առաջին փորձերից է: Ձեռնարկը նվիրված է մարդկանց առևտրի քննության խնդիրներին: Սույն աշխատությունը բացառիկ է նրանով, որ նմանատիպ հանցագործությունների քննության քրեաիրավական, դատավարական, կազմակերպչական, մեթոդաքրեագիտական հարցերը կամ խնդիրներն ուսումնասիրվում են ՀՀ քննչական և դատավարական պրակտիկայի լույսի ներքո առանձին պրակտիկ օրինակների ներկայացմամբ, ինչպես նաև էլեկտրոնային նյութերի ուղեկցությամբ:

Էլեկտրոնային ուսուցման գործընթացի շրջանակում ստեղծվել են «Կալանք», «Խոշտանգում», «Թրաֆիքինգ», «Թրաֆիքինգ. Քրեական հետապնդում, կանխարգելում, պաշտպանություն, թրաֆիքինգի դեմ պայքարը», «Թրաֆիքինգ. Քրեական պատմություն», «Թրաֆիքինգի գործերով քննության առանձնահատկությունները» և «Թրաֆիքինգի զոհերի հարցաքննության և նրանց հետ շփման հոգեբանական առանձնահատկությունները» ուսումնական ֆիլմերը:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցը համագործակցել է միջազգային հեղինակավոր կառույցների և փորձագետների հետ:

Ներկայումս դպրոցում աշխատանքներ են տարվում վերապատրաստման գործընթացների ընդլայնման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Նախատեսվում է շարունակել գիտագործնական միջոցառումների կազմակերպման ու անցկացման, իրավաստեղծ գործունեության, գիտագործնական ձեռնարկների կազմման և հրատարակման աշխատանքները, ինչպես նաև դպրոց ներմուծել ուսուցման նոր մեթոդներ և միջոցներ: Նոր էլեկտրոնային մեթոդների և ժամանակակից սարքավորումների ներդրումը վերապատրաստման ծրագրերում թույլ կտա կազմակերպելու դատախազության աշխատակազմի վերապատրաստման և մասնագիտական պատրաստման առավել արդյունավետ ու մատչելի դասընթացներ: Բացի այդ, առաջիկայում ՀՀ իրավապահ ոլորտի այլ մասնագետների վերապատրաստման և մասնագիտական պատրաստման համար դպրոցը, ունենալով եվրոպական չափանիշներին համապատասխան նյութատեխնիկական և մասնագիտական բազա, կիրականացնի պատշաճ մակարդակի արդյունավետ ուսուցում:

Դպրոցը առաջիններից է, որն օգտագործում է աշխարհի տարբեր երկրների փորձը վերապատրաստման և մասնագիտական պատրաստման ոլորտում, մասնավորապես՝ ուսումնական ծրագրերում ներդնելով արդի տեխնիկական ու նյութական հարուստ բազա:

Դատախազության 2011 թվականի գործունեության արդյունքները քննարկվել և ամփոփվել են Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2011 թվականի փետրվարի 24-ի նիստում, որին մասնակցել են ՀՀ Նախագահի օգնականը, ԼՂՀ գլխավոր դատախազը, ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալը, ՀՀ քննչական ծառայությունների և վարչությունների պետերը, իսկ Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների աշխատանքի արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների մասնակցությամբ անցկացված խորհրդակցություններում, որտեղ նշվել են դատախազության գործունեության ընթացքում տեղ գտած բացթողումներն ու թերությունները և դրանց վերացման, ինչպես նաև աշխատանքի արդյունավետության հետագա բարձրացման ուղղություններն ու միջոցառումները:

Հավաստիացնում եմ, որ շարունակելով իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները, Հայաստանի Հանրապետության դատախազությունը կանի հնարավորինս՝ հանրապետությունում օրինախախտումների դեմ տարվող պայքարին, սահմանադրական և հասարակական կարգի ամրապնդմանն օժանդակելու, պետության, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև

օրինականության պահպանմանն առնչվող սահմանադրական լիազորություններից բխող մյուս խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: Միաժամանակ, բացահայտելով դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման աշխատանքում տեղ գտած թերություններն ու բացթողումները, կարվեն դրանցից բխող համապատասխան հետևություններ՝ հետագա աշխատանքների արդյունավետությունն առավելագույնս ապահովելու համար:

Խորին հարգանքով՝

Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ